

5549

36269

17-64

1909

2010

657

3-39

ար.

062 (-9198)

1964

482

Handwritten signature



Ա Ղ Ի Ի

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ

„ՄԵՂՈՒ“

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՆ ԸՆԿ.

15423

1908 թ.ի *Համագրք* հոյեմբերից մինչև 1909 թ. վերջը

15423

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ



Թ Ի Ք Ի Ս

Տպարան «ՊՐՕԳՐԵՍՍ» ԸՆԿ. | Типография Т-ва «ПРОГРЕСС»,
Вельяминовская, 7.

1909

17398

370
2137-20

657+369 [տեղոք]

Հ-39

«Մեղո» ԱՅԵՍԱՏՆՔԻ ՏԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՆԸ

1908 թ. ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆԸ

Վարչութիւնը 1908 թ. տարեշրջանում ունեցել է 42 նիստ: Գլխաւոր հարցերը, որոնցով վարչութիւնն զբաղւել է եղել են՝ ա) Աշխատանքի բաշխման խնդիրը: բ) Աշխատանքի բիւրօ հիմնելու կարեւորութիւնը գ) Նոր ծրագրի մշակումը Աշխատանքի Տան և դպրոց է արհեստանոցների համար: դ) Նիւթական միջոցներ ձեռք բերելու հոգար:

«Մեղո» Աշխատանքի Տունը հաւատարիմ մընալով իր ընտրած «Աշխատիր ապրիր» նշանաբանին, ամեն միջոց ձեռք է առնում աշխատանքի ազնիւ գաղափարը ներմուծել հայ կանանց և օրիորդների մէջ: Եւ անա այդ պատճառով շատ լուրջ կերպով է վերաբերւել Աշխատանքի բաշխման խնդրին: Այս հարցը աւելի հիմնաւոր և նպատակայարմար հողի վրայ դնելու համար, վարչութիւնն թափել է բաւական ջանքեր, նա այս նպատակաւ շրջել է աշխատաւոր կանանց տները, ցուցակագրել է նոցա, ցուցակագրել է, նոցա աշխատանքի տեսակները, ծանօթացել է նոցա կարիքների հետ և ըստ նոցա չքաւորութեան բաժանել է այդ աշխատաւոր կանանց մի քանի կարգերի: Թէպէտ և այս վիճակագրական աշխատանքը կարօտ է դեռ ևս աւելի լուրջ ուսումնասիրութեան բայց և այնպէս այդ տեղեկութիւնները

պարզել է, որ աշխատանքի գլխաւոր ձեւ-կարն է: Այս պատճառաւ, վարչութիւնս ամեն կերպ աշխատում է կար մատակարարել իր բանւորուհիներին: Կար մատակարարելու աղբիւրները կարող են լինել պետական նաւոր հիմնարկութիւններից վերցրած կապալը, կամ վաճառքներ կազմակերպելը:

Կայ և մի ուրիշ միջոց մշտապէս կար մատակարարու համար, դա այն է, որ ընկերութիւնս ունենար մշտական խանութ, որով կարողանար սպառել աշխատաւոր կանանց պատրաստած իրերը, բայց քանի որ այս ձեռնարկութիւնը պահանջում է ընկերութեանս կողմից մի զգալի գումար, ուստի և վարչութիւնս դեռ այդ հարցը թողնում է ապագայում, որոշելու, երբ նրա նիւթական միջոցները աւելի բարւոք դրութեան մէջ կլինի:

ա. կապալ:

Որովհետեւ կապալը, ամենալաւ միջոցն է աշխատանք բաշխելու համար, ուստի և «Մեղուի» Վարչութիւնը 1908 թ. 29-ն փետրւարի մասնակցեց աճուրդով կապալին և վերցրեց Խնտենդանսովօից գինւորական հիւանդանոցի սպիտակեղէն պատրաստելը:

Այս կապալը հնարաւորութիւն տւեց 8 ամիս շարունակ 200 աղքատ բառի բուն նշանակութեամբ, չոր հացի կարօտ խեղճ կանանց աշխատանք տալ, այս կանանցից, աւելի նուրբ կար անողները ստանում էին ամսական 15—20 ռ., իսկ աւելի հասարակ կար անողները 10—15 ռ.:

Պէտք է նկատել, որ կապալներ վերցնելը շատ բարեբար ազդեցութիւն ունի աշխատաւոր կանանց համար այն է՝ որ ընկերութիւնը հանդիսանալով կապալառու, նա ազատում է բանւորուհիներին, այն վաշխառու կապալառուներից, որոնք ձեռքից-ձեռք անցկացնելով կա-

պալը, ամեն մէկը իւր հերթին կեղեքում և շահագործում է բանւորուհուն: Այն ինչ ընկերութիւնը վերցնելով կապալ, նա չի աշխատում բանւորուհիների կարելավարձից մի որևէ օգուտ ստանալ, այլ ընդհակառակը նորա նպատակն է միայն աշխատանք մատակարարել:

Չնայած, որ այս կապալը ընկ. համար առաջի փորձն էր, բայց պէտք է նկատել, որ այդ գործը մեծ յաջողութեամբ կատարեց ընկերութիւնս: Բացի այս կապալը ընկ. վերցրեց նաև մի փոքրիկ մասնաւոր կապալ, քաղաքային հիւանդանոցի համար:

Երբ մեծ կապալը վերջացաւ մի նոր կապալ պետական հիմնարկութիւններից վերցնելու հնարաւորութիւն չեղաւ, որովհետեւ վաշխառու կապալառուները սկսեցին դիմել ամեն տեսակ միջոցների, որպէսզի խանգարեն աշխատանքի տներին վերցնել կապալ և աճուրդի գները այնչափ ցածրացրին, որ ընկ. անկարող եղաւ նրանց հետ մրցել, որովհետեւ նրանց հետ մրցել դա նշանակում է, քնալ հակառակ ընկ. ամենահիմնական սկզբունքներին:

Բ Ա Չ Ա Ր

Բայց քանի որ կեանքը ընթանում է իր շաւղով և օրըստօրէ անգործների բանակները խտացնում էր, գործազուրկները բազմում էին աշխատանքի տան դուռը և աշխատանք, աշխատանք աղերսում: Քաղցածների այդ ազնիւ արգարացի բողբոջի և աղերսանքի ձայները հանգիստ չէին տալիս Վարչութեանը և Վարչութիւնը շատ լուրջ կերպով սկսեց մտածել, այն միջոցների մասին, որոնցով կկարողանար մշտական աշխատանք հասցնել գործազուրկներին, նա մի քանի ժողովներ շարունակ իւր զբաղման առարկան դարձրեց այդ հարցը: Երկար մտածելուց և մտքեր փոխանակելուց յետոյ, որոշեց, իր սեպհական միջոցներից առնել նիւթեղէն և բաժանել գործազուրկ

կանանց, որ նրանք պատրաստեն առօրեայ կեանքի մէջ ամենագործնական և պիտանի բաներ և ապա այս պատրաստած իրերը դուրս բերել վաճառքի, այսինքն կազմակերպել բնագար: Այդ ձևով 1908 սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերը բաւականաչափ իրեր էր պատրաստած, ուստի դեկտեմբերի 14-ից մինչև 22-ը հնարաւորութիւն եղաւ կազմակէրպել մի բազար: Բազարում ընդունուով էին նաև կողմնակի չքաւոր կանանց աշխատանքները:

Բազարը բազմակողմանի նշանակութիւն ունեցաւ ընկերութեան համար, բացի այն, որ նա հնարաւորութիւն տուեց մի քանի տասնեակ կանանց իրանց ձեռագործները արդիւնաւէտ կերպով վաճառելու, միևնոյն ժամանակ բազարը ցուցահանդէսի բնաւորութիւն կրելով ծանօթացրեց հասարակութեանը ընկերութեան արհեստանոցներում պատրաստած աշխատութիւնների հետ:

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Բ Ի Ի Ր Օ

Աշխատանքի բիւրօ հիմնելու կարևորութիւնը օրըստօրէ աւելի զգալի է դառնում Վարչութեանս համար, որովհետև անագին թուով զանազան տեսակի աշխատանքներ պահանջող աշխատաւոր կանայք դիմում են ընկերութեանս և որոնց ընկ. անկարող է բաւարարութիւն տալու. Վարչութիւնս ձգտում է մօտ ապագայում հիմնել այդ բիւրօն, որը այնքան էլ մեծ ծախսեր չի պահանջում:

ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ ԵՒ ԴՊՐՈՑ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ

«Մեղու» ընկ. Վարչութիւնը ցանկանալով իր գործունէութիւնը աւելի հիմնաւոր հողի վերայ դնել, իւր նոյեմբերի 15-ի նիստում որոշեց մի մասնաժողով ընտրել, որը մշակէ մի նախագիծ նոր արհեստներ մտցնելու, կամ եղած արհեստանոցները աւելի լաւ հիմունքների վրայ դնելու համար և նմանապէս դպրոց-արհեստանոցում, անցնող օ-

ժանդակիչ առարկաների ծրագիր կազմելու: Մասնաժողովի անդամներ ընտրւել էին տիկ. Մինասեան, Դաւթեան, Զաւարեան-Յակոբեան, Ֆլօրա Վարդանեան, կոյս Թայրեան և պ. Սոլովեան. այս մասնաժողովը իւր կողմից հրաւիրեց մասնակցելու մի քանի ձեռահաս և օգտակար անձնաւորութիւններ՝ Տիկ. Ե. Յարութիւնեան, պ. Ակունեանի և պ. Թերզիբաշեան: Այս վերոյիշեալ մասնաժողովը կազմել է մի նախագիծ, որը և դեռում է ընդհանուր ժողովի քննադատութեան:

ԿԱՐ ՈՒ ՁԵԻՒ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

Կար ու ձեի արհեստանոցում 1908 թ. եղել են 10-ը աշխատաւոր կանայք, որոնցից 4-ը վարձով էին աշխատում, իսկ 6-ը, կատարելագործւում են գործնականապէս այդ արհեստի մէջ 1908 թ. ընթացքում, արհեստանոցում եղել է 200 պատէր և բացի այդ 300 կտոր իր պատհասւել է բազարի համար:

Կ Ա Ձ Մ Ա Տ Ո Ւ Ն

Կազմարարական արեստանոցում, եղել են 15 աշակերտուհի: Արհեստների բացակայութիւնը հայ կանանց մէջ մի տեսակ նոխապաշարմունք է առաջ բերել դէպի արհեստները, համարելով այդ տղամարդու գործ: Այս հանգամանքից դրդւած, վարչութիւնս այս տարի հրաւիրեց կին կազմարարուհի, իբրև դասատու: Աշակերտուհիները տեսնելով կենդանի օրինակը, այժմս աւելի լաւ են վերաբերւում դէպի այդ արհեստը:

Արհեստանոցում այս տարւայ ընթացքում եղել է 6 բրօշիւրովկա և կազմել են մօտ 20« կտոր գիրք:

Ընկերութիւնս սուղ միջոցների պատճառաւ չի կարողացել ձեռք բերել մի քանի անհրաժեշտ կազմարարական մեքենաներ, որոնց բացակայութիւնը խանգարում է այս գործի յառաջադիմութեան:

Դ Պ Ր Ո Յ—Ա Ր Հ Ե Ս Տ Ա Ն Ո Յ

Դպրոցի արհեստանոցում, անցնում են օժանդակիչ առարկաներ արհեստների համար և այդպիսով տալով օգտակար գիտելիքներ, դպրոց արհեստանոցը ստեղծում է աւելի գիտակից արհեստաւորներ, որոնք աւելի մեծ դիւրութեամբ և աւելի լաւ տեսակի աշխատանքներ են արդիւնաբերում քան տգէտ բանւորները, բացի այդ դպրոց արհեստանոցը գիտակցութիւն առաջ բերելով բանւորների մէջ ազատում է նրանց կապիտալիստ տէրերի շահագործումներից:

Ըրկերութեանս պատահել է լսել շատ տխուր փաստեր բանւորուհիների կեանքից, որը առաջ է գալիս նոցա տգիտութիւնից, երբ կապալի ժամանակ 2 զոյգ գուլպան 5 կ. հաշւելով, 10 զոյգի համար նոցա վճարում էին 25 կոպէկ, նոքա զարմանում էին և ասում, որ կապալառուի մօտ էլ այդ նոյն պայմանով էին վարձել, բայց այդչափ չէին ստանում: Ակներև է որ կապալառուն օգտւելով այն հանգամանքից, որ բանւորուհին տգէտ է և չի կարող հաշւել թէ 10-ի մէջ քանի զոյգ կայ, վճարում է նրան աւելի քիչ, քան պարտաւոր էր:

Այս տարի դպրոց-արհեստանոցի 2 բաժանմունքում եղել են 37 հոգի, որոնցից 3-ը հեռացել են տարւայ ընթացքում, 2-ը Պարսկաստան են գնացել, իսկ մէկ ամուսնացել է:

Դպրոց-արհեստանոցի 2 բաժանմունքը սենեակների քչութեան պատճառաւ, զետեղած է մի սենեակի մէջ, որը մանկավարժական տեսակէտից մեծ անյարմարու-

թիւններ է առաջացնում և խանգարում է դպրոց-արհեստանոցի յառաջադիմութեանը, ցանկալի էր վերացնել այդ անյարմարութիւնը:

Աշակերտուհիներից շատերին Վարչութիւնս տւել է ձրի հագուստ և զեղօրայք տօներին կազմակերպել է աշակերտուհիների համար հանգէսներ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻԻԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Պէտք է նկատել, որ «Մեղու» Ընկ. Վարչութիւնը իւր 1908 թ. գործունէութեան շրջանում շատ մեծ նիւթական խոչընդոտների է հանդիպել:

Քաջ յայտնի է. Ընկ. բոլոր անդամներին, որ «Մեղու» ընկ. լինելով դեռ ևս մանուկ հասակում, նիւթական և ոչ մի ապահովութիւն չունի, իսկ անդամակցական վճարները բաւարարութիւն չեն տալիս նորա էական պահանջներին, այնպէս որ պակասը լրացնելու համար «Մեղու» Ընկ. Վարչութիւնը կազմակերպել է աշնանը մի ներկայացում, ապրիլին զբօսանք և ամառը վիճակախաղ:

Վարչութիւնս շատ յաճախակի լսել է դժգոհութիւններ զանազան անհատների կողմից, իբր «Մեղու» ընկերութիւնը շատ է դիմում հասարակութեանը, բայց այդպիսի դժգոհութիւններ յայտնողներից և ոչ մէկը չէ ցոյց տւել մի ուրիշ ճանապարհ, մի ուրիշ ելք, որով վարչութիւնս կարողանար բանւորել իր միջոցները և քանի, որ բոլոր բարեգործական հիմնարկութիւնները դեռ ևս չեն կարողացել մշակել ուրիշ միջոցներ, որոնցով կարողանային ապահովել իրենց դրութիւնը, ուստի Վարչութիւնս խոհեմութեամբ տանելով այդ նկատողութիւնները, շարունակեց իր գործը և մեծ դժւարութիւններով հանդերձ կազմակերպեց այդ արդիւնաբեր զբօսանքները, որոնցով և կարողացաւ պահպանել իր գոյութիւնը:

Միբունկ ենք հաւատալ, որ կանցնեն «Մեղու» ընկե-

րութեան մանկութեան այս ծանր ու դժւար օրերը և մօտ ապագայում «Մեղու»-ն այլևս հասարակական օժանդակութեան կարիք չի ունենայ: Նա ընդարձակելով իր ազնիւ աշխատաւորները շարքերը, աշխատանքի դրօշակի տակ, իր սեպհական աշխատանքներով կպահպանէ իր գոյութիւնը:

«Ներկայացնելով 1908 թ. տարեշրջանի հաշւետուութիւնը «Մեղուն» դնում է իւր գործունէութիւնը հասարակութեան և մամուլի քննադատութեան և ուրախ կլինի լսելու ձեռնհաս մարդկանց կարծիքները և խորհուրդները:

Վարչութիւնն օգտուելով առիթից յայտնում է իր անկեղծ շնորհակալութիւնները, այն բոլոր հաստատութիւններին և մասնաւոր անձանց, որոնք իրենց նիւթական և բարոյական աջակցութեամբ քաջալերեցին ընկ. վարչութեան ջանքերը. մասնաւորապէս բժ. Շխեանին, որը ձրիապէս բժշկել է աշխատանքի և տան—աշակերտունիներին և բանւորունիներին, տիկ. Մ. Աբեանցին, որը էժան վաճառքի համար 2 շաբաթ ձրիապէս իւր կրպակը դրել է ընկ. տրամադրութեան տակ, նոյնպէս տիկ. Յովհաննիսեանին, օր. Արարատեանին տիկ. Շախպարոնեանին, տիկ. Շխեանին տիրունի Զարգեղեանին, պ. Ակունեանին և պ. Թերզիբաշեանին, որոնք մօտ մասնակցութիւն են ցոյց տւել ընկերութեանս գործերին:

ՀԱՅՈՒՆՆԵՐ «ՄԵՂՈՒ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1908 թ. ՄԱՅԻՍԻ 25-Ի ԸՆՀԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

Յերեկուայ ժամի 12-ին վարչութեան նախագահահուին, տիրունի Մինասեանը բացեց ժողովը որին ներկայ էին ընկերութեան 38 անդամունիներ և առաջարկեց ընտրել ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար:

Նախագահ ընտրուեց իշխանունի Մարիամ Թոմասեանը, իսկ քարտուղար տիկին Հրանուշ Թովչեանը:

Նախ և առաջ կարդացւեց մի համառօտ գեկուցում վարչութեան գործունէութեան ընկերութեան հիմնելու օրից մինչև 1908 թ. յունվարի 1-ը: Վիճաբանութիւնների նիւթ դարձաւ գեկուցման այն կէտը, որ վերաբերում է «աշխատանքի տան» նախապարաստական, այսինքն կրթական մասին: պ. Եսայրեկեանը հարց բարձրացրեց, թէ արդէօք ծխական դպրոցների ամբողջ ծրագիրն են անցնում դպրոցում, թէ նրա մի մասը: Մտքերի փոխանակութիւններից պարզւեց որ դպրոցում անցնում են միայն այն առարկաները, (ծխական դպրոցի ծրագրով) որոնք անհրաժեշտ են արհեստների համար, ուստի հասարակութեանը չմոլորեցնելու համար գեկուցման այդ կէտը պիտի փոխել այդ մտքով:

Դրամական հաշիւը հաստատուեց առանց որևէ առարկութեան և ապա անցաւ 1908 թ, նախահաշի քննութեան: Ընդհանուր ժողովի ուշադրութիւնը գրաւեց կազմարարական արհեստը, որ մտցրել է վարչութիւնը դպրոցում: Տիրունի Մինասեանի և կ. գմարարութեան ուսուցչի բացատրութիւնից երևաց որ գործը կանոնաւոր դրւած չէ մեքենաների պակասութեան պատճառով և այդ պատճառով չպէտք է մեծ եկամուտ սպասել այդ գործից:

Իշխ. Մարիամ Թումանեանը առաջարկեց ընդհանուր ժողովին նախ վճուել այն հարցը, թէ ցանկալի է շարունակել այդ արհեստը թէ ոչ: Եթէ վճուուի գրական կերպով, այնուհետև մեքենաներ ձեռք բերելու մասին վիճաբանութիւնները աւելորդ են, քանի որ առանց մեքենաների անկարելի է գործը շարունակել: Անդամները համարեայ միաձայն վճուում են շարունակել կազմարարական արհեստը նոր հարց է բարձրանում, թէ որտեղից վերցնել մեքենաներ առնելու համար անհրաժեշտ գումարը, մօտ 1000

րուբլի: Տիկին Օրդուխանեանը առաջարկում է պարտա-
ւորեցնել իւրաքանչիւր անդամին 10 րուբլի հաւաքել ա-
մառուայ ընթացքում և քանի որ այժմ 100 անգամ կայ,
արդէն լրանում է 1000 րուբլի: Մտքերի փոխանակու-
թիւնից յետոյ եկան այն եզրակացութեան, որ անյարմար
է պարտաւորացնել անդամներին, այլ թող ամեն մէկը ա-
նի ինչ որ կարող է, իսկ իբրև Փոնդ այդ գումարին յատ-
կացնել 100 րուբլին, որ նւիրել է Վոմսուհի Վարանցով—
Դաշկովը: Ժողովը լիազօրութիւն տւեց վարչութեանը գնել
մեքենաները ամառուայ ընթացքում, եթէ դէպք պատահի:
Նախահաշի մէջ նկատուեց մի սխալ: Փոնդի օգտին յատ-
կացրած պիտի լինի 1000 րուբ. իսկ ոչ թէ 200 ր. և
վարչութիւնը պարտաւորուում է ուղղել այդ սխալը փոխե-
լով բալանսը: Անդամներից մի քանիսը հարց բարձրացրին
վարժուհիների ուճիկի մասին, գտնելով շատ չնչին նը-
րանց վարձատրութիւնը: Վարչութիւնը բացատրեց, որ
ընկերութեան միջոցները շատ սուղ են և նա հազիւ կա-
րողանում է ծայրը ծայրին հասցնել: Եթէ հնարանորու-
թիւն լինի վարչութիւնը ինքը մտադիր է աւելացնել ու-
ճիկները: Տիկին Տէր-Ստեփանեանը, որ հսկում է կապա-
լով վերցրած կարերին, ընդհանուր ժողովի ուշադրութիւ-
նը դարձրեց այն հանգամանքի վրայ որ վարչութիւնը հը-
նարաւորութիւն չունի ստուգելու բոլոր կարանողների
տնտեսական դրութիւնը և այդ պատճառով յաճախ պա-
տահել է, որ ճարպիկ և համեմատաբար ապահով կանայք
աւելորդ կարեր են վերցրել, իսկ աւելի չքաւորները զը-
կել են աշխատանքից երաշխաւոր չունենալու պատ-
ճառով: Ընդհանուր ժողովը գրա առաջը առնելու համար
վճռում է ընտրել մի յատուկ մասնաժողով գլխաւորապէս
Հաւաքարում բնակող տիկիներէից, որովհետև աշխատա-
ւոր կանայք էլ այդ տեղերիցն են և պարտաւորեցնել այդ
մասնաժողովին մանրամասը քննել խնդրատուների գրու-

թիւնը: Իշխ. Մարիամ Թումանեանի առաջարկութեամբ
այդ մասնաժողովի կազմակերպութիւնը յանձնեց տ.
Վարդուհի Յովհաննիսեանին որը սիրալիբ կերպով համա-
ձայնութիւն տուեց: Նախահաշիւր հաստատելուց յետոյ,
վարչութեան առաջարկութեամբ շնորհակալութիւն յայ-
տնեց պ. Եսայբեկեանին որը երգեցողութեան ձրի դա-
սեր էր տալիս, բժ. Մալաքեանին և բժ. Արեանին որոնք
ձրի բժշկում էին աշակերտուհիներին և պ. Թերզիբա-
շեանին որը գանաղան ձեւերով ծառայութիւններ է մա-
տուցել ընկերութեանը:

Այնուհետև վարչութեան նախագահուհի Տիրուհի մի-
նասեանը և իշխ. Մարիամ Թումանեանը մի քանի խօս-
քով բացատրեցին ժողովին կոմս. Վարանցով-Դաշկովի ա-
րած օգնութեան մասին: Բանից երևաց որ, առանց կոմ-
սուհու միջամտութեան վարչութիւնը չէր ստանայ կարե-
րի կամպալը և դեռ կկորցնէր այն գրաւականը, որ դրել
էր աճուրդին մասնակցելու իրաւունքի համար: Ընդհա-
նուր ժողովը միաձայն ընտրեց կոմսուհուն պատւաւոր
անդամ:

Վարչութիւնը յայտնեց, որ իր կազմից վիճակով գուրս
են գալիս տ. տ. Դաւթեան, Զաւարեան, Թեւեան և Թոփ-
չեան: Ժողովը ցանկութիւն յայտնեց վերընտրել նոյն ան-
դամներին, բայց տ. տ. Զաւարեան և Թոփչեանը միան-
գամայն հրաժարուեցին ծանրաբեռնած լինելով ուրիշ
գործերով: Առաջարկուեցին մի քանի թեկնածուներ, ո-
րոնցից գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին կոյս Թա-
յիրեան տ. տ. Օրդուխանեան, Վարդանեան և Դաւթեան:
Փոխանդամուհիների և վերաստուգիչ յանձնաժողովի ըն-
տրութիւնը յետաձգուեց մինչև միւս կիրակի ժամանակ
չլինելու պատճառով: Ժողովը փակուեց ժամի 2 1/2 ին:

Ընդհանուր ժողովի նախագահ՝

Իշխ. Մարիամ Թումանեան

Գարտուղարի փոխարէն՝ Սոփիա Մինասեան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵՍՑ «ՄԵՂՈՒ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1908
Թ. ՄԱՅԻՍԻ 25-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒ-
ԹԻՒՆԸ:

1908 թ. Յունիսի 1-ին ցերեկուայ ժամի 1-ին վարչութեան նախագահուհի՝ Տիրուհի Մինասեանը բացեց ժողովը, և առաջարկեց այդ ժողովի համար նախագահ և քարտուղար ընտրել:

Նախագահ ընտրուեց Տիկին Երանուհի Յարութիւնեան, իսկ քարտուղար տիկին Վարդուհի Յովհաննէսեան:

Օրակարգն էր. վարչութեան 3 նոր անդամների 4 փոխանդամների 4 վերաստուգիչ յանձնաժողովի և 2 փոխանդամների ընտրութիւնը:

Ընտրուեցան վարչուպեան անդամներ տ. տ. Առֆիա Զաւարեան—Յակօբեան տ. Ս. Մելիք-Շահնազարեան և Մարիամ Թևեան փոխանդամն Օր. Մարիամ Արարատեան օր. Եղիսաբէթ Գառապրեան, տիկին Վարդուհի Յովհաննիսեան և տ. Ա. Վրթանիսեան. վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ տ. Հրանուշ Թովիչեան, տ. Տէր-Մինասեան, տ. Սոֆիա Թէրզիբաշեան: Մասնաժողովի փոխ անդամներ Տիրուհի Աննա Զարթեղեան և օր. Աննա Շահվերդեան:

Ժողովը փակուեց ժամը 3-ին,

Նախագահ՝ Ե. Յարութիւնեան

Քարտուղար՝ Վարդուհի Յովհաննիսեան



Table with multiple columns and rows, containing faint text and numbers, likely a ledger or financial record. The text is mostly illegible due to fading and bleed-through from the reverse side.

Թիֆլիս հայուհեաց «Մեղու»
ընդհանուր ելի

Մ Ո Ւ Տ Ք

№ №	Մ Ո Ւ Տ Ք Ի Յ Օ Դ Ո Ւ Ծ Ն Ե Ր	Նախնչու սպասուում էր		Իսկապէս մուտք է եղել	
		Ր.	Կ.	Ր.	Կ.
1	Մնացորդ գումար 1907 թուից՝ ա) դրամով . . . 1338—47 բ) ինվէնտարով . . . 400— —	—	—	1738	47
2	0/0 դրամապլիից	—	—	8	83
3	Ընկերութեան մի աւելորդ սենեակից վարձ	—	—	240	—
4	Մուտք աշխատանքի տանից	700	—	750	—
5	Անդամավճարներ (տես ցուցակը)	500	—	566	—
6	Նուէրներ (տես ցուցակը)՝ ա) դրամով 546—13 բ) իրեղէններով 49—50	—	—	550	—
7	Ներկայացումներից, զբօսանքից, բազարից և այլն	1800	—	2200	—
8	Պարբերական օժանդակութիւն Քաղ. վարչութիւնից	150	—	150	—
9	Կապալներից՝ ինտէնդանտսավոյում և քաղ. կանանց հիւանդանոցում	3500	—	3345	85
		7200	—	9594	78

Աշխատանքի տան Ընկ. 1908 թուի
մտից հաշիւը.

Ե Լ Ք

№ №	Ե Լ Ք Ի Յ Օ Դ Ի Ա Ծ Ն Ե Ր	Նախահաշուով պէտք էր		Իսկապէս ծախս եղել է	
		Ր.	Կ.	Ր.	Կ.
1	Աշխատանքի տան ծախք՝ ա) տան վարձ, վառելիք, լուսաւորութիւն, նիւթեղէն, ձեռագործի արհեստանոցի և կազմարանի համար, դպրոցի ծախք և այլն	1120	—	1260	45
	բ) ուձիկներ ծառայողներին	1680	—	1680	—
	գ) կապալի համար զանազան ծախք	—	—	600	—
2	Օժանդակութիւն աշխատաւոր կանանց՝ ա) դրամով (աշխատ. վարձ) 2675—29 բ) իրերով կայլն 50— —	—	—	2400	—
3	Ինվէնտար ձեռք բերելուն	—	—	—	60
4	Ներկայացումներ, զբօսանքներ, բազար կայլն կազմակերպելու	—	—	—	835
5	Մանր ծախքեր	—	—	—	24 73
		5200	—	7085	47
6	Փօնդի գումար կազմելու համար խնայած է՝ ա) Թիֆլ. առևտր. բանկում . 1903— — բ) Պետ. խնայող. գանձարան. 8—83 գ) Առձեռն դրամ գանձապ. մօտ 97—48	—	—	2000	—
7	Առ 1-ն յունւար ընկերութեան մնում է՝ ա) ինվէնտար 360 բ) ձեռագործի իրեղէն 140	—	—	—	500
		7200	—	9594	78



Թիֆլիսի հայուհեաց «Մեղու» Աշխատանքի և ֆուսի

ԵԿԱՄՈՒՏ

№ №	ՉՈՒՏ ԵԿԱՄՈՒՏԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ	Գումար	
		Բ.	Կ.
1	Փոխանցումն 1907 թվի հաշուից՝ ա) դրամով 1338—47 բ) ինվէնտարով 400—	1738	47
2	0/0 խնայած գումարներից	8	83
3	Արդիւնք Աշխատանքի տանից և կապալներից	3015	40
4	Անդամավճարներ	566	—
5	Նուէրներ՝ ա) դրամով 546—13 բ) իրեղէններով 49—50	595	63
6	Ներկայացումներից, զբօսանքներից, բազարից և այլն	1365	—
7	Պարբերական օժանդակութեան քաղ. վարչութիւնից	150	—
		7439	33

տանքի Տան Ըսկերութեան 1908 թուի հաշիւը.

ԾԱԽՔ

№ №	ԻՍԿԱԿԱՆ ԾԱԽՔԻ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	Գումար	
		Բ.	Կ.
1	Աշխատանքի տան ծախքեր՝ ա) Տան վարձ 600 բ) Ռոճիկներ ծառայողներին 1680	2280	—
2	Վարձատրութիւն աշխատաւոր կանանց	2625	29
3	Մանր ծախքեր	24	73
		4930	02
	Առ 1-ն յունւար 1909 թուի մաքուր արդիւնք ստացուել է՝ ա) դրամով 2009—31 բ) ինվէնտարով 500—	2509	31
		7439	33

Թիֆլիսի հայուհեաց «Մեղու» Աշխատանքային
1908 թվի

ԱԿՏԻԻ

տանքի Տան Ընկերութեան
բալանսը

ՊԱՍԻԻ

№ №	Կ Ա Ր Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն	Գումար	
		Բ.	Կ.
1	Թիֆլիսի առևտրական բանկում № 3944 ընթացիկ հաշուով	1753	—
2	Նոյն տեղը պահեստի № 51704 տոմսակով	150	—
3	Պետական խնայող. գանձարանում № 39122 գրքոյկով	8	83
4	Ա.ս. ձեռն գրամ ընկ. գանձապահի մաս — առ 1-ն յունւարի 1909 թվի	97	48
5	Ընկերութեան ինվէնտարը	360	—
6	Չեռագործի նիւթեղէներ.	140	—
Իալանս		2509	31

№ №	Պ Ա Ր Տ Ք	Գումար	
		Բ.	Կ.
1	Ընկերութեան ֆոնդ կազմելու համար վար- չութեան որոշմամբ յատկացրած է (ի հաշիւ առնելով անցեալ տարեհաշիւ 1000 ռ. հետը)	2000	—
2	Ծախքի գումար մնում է.	509	31
Իալանս		2509	31

Թիֆլիսի Հայուհեաց «Մեղու»
1909 թուի

ՄՈՒՏՔ

№ №		1908 թ. մուտքը		Ենթադր. 1909 թ.	
		Բ.	Կ.	Բ.	Կ.
1	0/0 դրամագլխից	—	—	25	—
2	Արդիւնք աշխատանքի տանից	750	—	750	—
3	Անդամավճարներ	566	—	600	—
4	Նուէրներ	595	63	500	—
5	Ներկայացումներ, զբօսանքներ և այլն	2200	—	2300	—
6	Պարբերական օժանդակութիւն քաղ. վարչութիւնից	150	—	150	—
	Կապալներից	3335	85	1500	—
				5825	—

Աշխատանքի տան ընկերութեան
հախահաշիւը

ԵԼՔ

№ №		1908 թ. ծախսեր		Ենթադր. 1909 թ.	
		Բ.	Կ.	Բ.	Կ.
1	Աշխատանքի տան ծախքեր՝ ա) Տան վարձ, վառելիք, լուսավորութեան և մանր ծախք	1260	45	900	—
	բ) Ռոճիկներ ծառայողներին	1680	—	2000	—
	գ) Կապալի ծախքեր	600	—	500	—
2	Օժանդակութիւն աշխատ. կանանց	2625	29	1000	—
3	Ինվէնտար ձեռք բերելուն	60	—	100	—
4	Ներկայացումներ, զբօսանքներ և այլն կազմակերպութեան	835	—	800	—
5	Մանր ծախքեր	24	73	25	—
6	Փօնդի գումարն աւելացնելուն	2000	—	500	—
				5825	—

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

- Նախագահ՝ տ. Սոփիա Մինասեանց
Գանձապահ՝ Կոյս Հովհաննիսյան
Փոխ-Նախագահ՝ տ. Ս. Զաւարեան-Յակովբեանց
Քարտուղար՝ տ. Ֆլորա Վարդանեան
Անդամներ տ. Ս. Դաւթեան
տ. Ս. Շահնազարեանց
տ. Մ. Թեան (որի բացակայութեան պատճառով հրաւիրուել է օր, Մ. Արարատեան)
տ. Գ. Օհանեան
տ. Ե. Աբրահամեան
տ. Ա. Եղիազարեան
տ. Ա. Օրդուխանեան
օր. Մ. Կարա-Մուրզա
Փոխ-անդամներ՝ օր. Ե. Գասպարեան
օր. Արարատեան
տ. Ա. Վրդանեսեան
տ. Վ. Յովհաննիսեան
Վերաստուգիչ յանձն. անդամ. տ. Հրանոյշ Թովչեան
տ. Մ. Տէր-Մինասեան
տ. Ս. Թերզիբաշեան
Փոխ-անդամներ՝ օր. Ա. Շահվերդեան
տ. Ա. Զարդեղեան

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻԹՆԸ

Քննութեան ենթարկելով «Մեղու» Աշխտանքի տան ընկերութեան դրամական հաշիւները 1908 թուի յունվարի 1-ից մինչը 1909 թուի յունվարի 1-ը, յանձնաժողովս այդ հաշիւները գտաւ ճիշտ, ծախքերը փաստաթղթերով վաւերացրած և դրամական կարողութիւնը լրիւ և անվտանգ:

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ
տ. Հ. Թովչեան
տ. Մ. Տէր-Մինասեան
տ. Ս. Թերզիբաշեան

1909 թ. յունիս
Թիֆլիս.



1908 թ. անդամների ցանկը և նրանց վճարած գումարը

ՊԱՏՈՒԱԿՈՐ ԱՆԴԱՄ

Կոմսուհի վարանցովա-Իաշկովա

ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄ

Կոյս Հոփսիմէ Թայրեանց

Ի Ս Կ Ա Կ Ա Ն Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

- | | |
|---------------------------------|--------------------------------|
| 1 տ. Միլեան վարվառէ 12 ր. | 37 տ. Ամիրզադեան Օլգա 4 ր. |
| 2 տ. Քաջազնանի Սաթենիկ 12 ր. | 38 տ. Յակոբեան Շուշանիկ 4 ր. |
| 3 տ. Չարգարեան Նունէ 12 ր. | 39 տ. Շարբարչեան Եւա 4 ր. |
| 4 տ. Վրդանեսեան Ամալեա 12 ր. | 40 տ. Սահփանեան Եւա 3 ր. |
| 5 տ. Օրդուխանեան Աննա 10 ր. | 41 տ. Աշխրուսեան Նատ. 3 ր. |
| 6 տ. Հեջուբեան Եղիսարէթ 10 ր. | 42 օր. Արարտեան Մար. 3 ր. |
| 7 տ. Բասուրբամեան Վ. 6 ր. | 43 օր. Աղայեան Անահիտ 3 ր. |
| 8 տ. Դաւթեան Սոֆիա 6 ր. | 44 տ. Արզումանեան Ա. |
| 9 տ. Դաւթեան Մարիամ 6 ր. | 45 տ. Անահչեան 3 ր. |
| 10 տ. Երզնկեան 6 ր. | 46 օր. Արեշեան 3 ր. |
| 11 տ. Մինասեան Սոֆիա 6 ր. | 47 տ. Աբուլեան 3 ր. |
| 12 տ. Մարտիրոսեան Հայ. 6 ր. | 48 տ. Աբրահամեան Օ. 3 ր. |
| 13 տ. Աբովեան 5 ր. | 49 տ. Ալէքսանեան 3 ր. |
| 14 տ. Բոյաճեան Արաքսիա 5 ր. | 50 տ. Առիւծեան Եղիսարէթ 3 ր. |
| 16 տ. Բողարչեան Մարիամ 5 ր. | 51 տ. Ասլամազեան Ֆլօրա 3 ր. |
| 16 տ. Եղիսարեան Աղեք. 5 ր. | 52 տ. Անանեան Ոսկի 3 ր. |
| 17 տ. Երիտասն 5 ր. | 53 տ. Անանեան Կատարինէ 3 ր. |
| 18 տ. Ելակին Շուշանիկ 5 ր. | 54 տ. Ասլամազեան Վար. 3 ր. |
| 19 տ. Թամազեան Եղիսար. 5 ր. | 55 տ. Ասլամազեան Վառ. 3 ր. |
| 20 օր. Իզմիրեան Հեղինէ 5 ր. | 56 տ. Ապրեսեան Գայանէ 3 ր. |
| 21 տ. Խաչատրեան Եղիսար. 5 ր. | 57 օր. Արդութեան Ս. (Իշխ) 3 ր. |
| 22 օր. Խանխալամեան 5 ր. | 58 տ. Բուրաբասեան Ա. 3 ր. |
| 23 տ. Խանզամիրեան 5 ր. | 59 տ. Բողարճեան Աննա 3 ր. |
| 24 տ. Մայսէկա 5 ր. | 60 տ. Բէզլարեան Թագուհի 3 ր. |
| 25 տ. Յովհաննիսեան Շուշան. 5 ր. | 61 տ. Գայտամակին 3 ր. |
| 26 տ. Յովհաննիսեան Վարդ. 5 ր. | 62 օր. Գասպարեան Եղիս. 3 ր. |
| 27 տ. Շիւեան Նատալիա 5 ր. | 63 տ. Գուլեան Աննա 3 ր. |
| 28 տ. Նալչազարեան Սաթ. 5 ր. | 64 տ. Դիլանեան Փեփրոնէ 3 ր. |
| 22 տ. Շահպարտեան Վարդ. 5 ր. | 65 տ. Դաւթեան Քալի 3 ր. |
| 30 տ. Չանփոլաղեան 5 ր. | 66 տ. Չաւարեան Սոֆիա 3 ր. |
| 31 տ. Սահակեան Բարօ 5 ր. | 67 տ. Չոբարեան Շուշա. 3 ր. |
| 32 տ. Սարգսեան Մարգ. 5 ր. | 68 տ. Չարգարեան Նունէ 3 ր. |
| 33 տ. Տէր-Յակոբեան Ս. 5 ր. | 69 տ. Չարդեղեան Աննա 3 ր. |
| 34 տ. Տէր-Յակոբեան Թամ. 5 ր. | 70 տ. Թերզիբաշեան Սոֆիա 3 ր. |
| 35 տ. Աբրահամեան Եղիս. 4 ր. | 71 տ. Թումայեան Հոփս. 3 ր. |
| 36 տ. Ամիրզադեան Սաթ. 4 ր. | |

- | | |
|--------------------------------|-------------------------------------|
| 72 տ. Թոփչեան Հրանոյշ 3 ր. | 103 տ. Տէր-Տէրեան 3 ր. |
| 73 տ. Թումայեան Այան 3 ր. | 104 տ. Փիլալեան 3 ր. |
| 74 տ. Թումանեան Մ. (Իշխ) 3 ր. | 105 օր. Խիզանեան Սոֆիա 3 ր. |
| 75 Կոյս Թոյրեան Հոփսիմէ 3 ր. | 106 օր. Կարա-Մուրզա Մար. 3 ր. |
| 76 տ. Լիսիցեան Կատարինէ 3 ր. | 107 տ. Կամսարական 3 ր. |
| 77 տ. Ծուրինեան Մարգար. 3 ր. | 108 տ. Կայալեան Նունէ 3 ր. |
| 78 օր. Ծերեթեղի 3 ր. | 109 տ. Հախվերդեան Աննա 3 ր. |
| 79 տ. Կաֆեան Սաթենիկ 3 ր. | 110 տ. Դուկասեան Թագուհի 3 ր. |
| 80 տ. Յովհաննիսեան Դարիա 3 ր. | 111 տ. Մելիք-Շահնազարեան Սոֆիա 3 ր. |
| 81 տ. Յակոբեան Եղիսարէթ 3 ր. | 112 տ. Մարգարեան Եղիս. 3 ր. |
| 82 տ. Յարութիւնեան Մար. 3 ր. | 113 տ. Մէլքումեան Վառվա. 3 ր. |
| 83 տ. Յարութիւնեան Աննա 3 ր. | 114 Տիր. Մեհրաբեան Նունէ 3 ր. |
| 84 տ. Նէրսէսեան 3 ր. | 115 օր. Միրզոյեան Աննա 3 ր. |
| 85 տ. Նարարեան Ե. 3 ր. | 116 տ. Մարգարեան Հոփս. 3 ր. |
| 86 տ. Շիօեա-Փիտոյեան 3 ր. | 117 տ. Մովսէսեան Եղիս. 3 ր. |
| 87 օր. Շահվերդեան 3 ր. | 113 տ. Մանուէլեան Եւա 3 ր. |
| 88 Տիր. Շիոյեան 3 ր. | 119 տ. Յովհաննիսեան Դիլ. 3 ր. |
| 89 տ. Շիւեան Մարիամ 3 ր. | 120 տ. Յովհաննիսեան Օլգա 3 ր. |
| 90 տ. Պապուկեան Մարիամ 3 ր. | 121 տ. Մ. Տէր-Մինասեան 2 ր. |
| 91 օր. Սալինեան Սաթենիկ 3 ր. | 122 տ. Դէկարխանեան Եղիսանէթ 3 ր. |
| 92 օր. Սարգսեան 3 ր. | 123 Տիրուհի Մամիկոնեան 3 ր. |
| 93 օր. Սիբերբրիկեան Մար. 6 ր. | 124 տ. Յովհաննիսեան Օ. 3 ր. |
| 94 օր. Սիբերբրիկեան Հոփի. 3 ր. | 125 տ. Օհանեան 3 ր. |
| 95 տ. Սուրինեան Մարիամ 3 ր. | 126 տ. Յարութիւնեան Ե. 3 ր. |
| 96 տ. Սահաթսազեան Նունէ 3 ր. | 127 տ. Չախմախչեան Գայ. 3 ր. |
| 97 տ. Սարգսեան Օվսաննա 3 ր. | 128 Չախմախչեան Ռուզան 3 ր. |
| 98 տ. Սուքասեան Կատար. 3 ր. | 129 Չախմախչեան մարիամ 3 ր. |
| 99 տ. Վարդանեան 3 ր. | |
| 100 տ. Վարդպատրիկեան 3 ր. | |
| 101 տ. Վարտեան 3 ր. | |
| 102 տ. Տէր-Ստեփանեան 3 ր. | |

Օ Ժ Ա Ն Դ Ա Կ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

- | | |
|-------------------------------|-----------------------------|
| 130 պ. Քիւրքճեան Մկրտիչ 10 ր. | 139 պ. Յուրինեան Կ. 5 ր. |
| 131 պ. Սարգսեան Կ. 10 ր. | 140 պ. Դուրուխանեան Կ. 5 ր. |
| 132 պ. Գրիգորեան Ա. 5 ր. | 141 պ. Գասպարեան Ս. 5 ր. |
| 133 պ. Բաղդասարեան Ա. 5 ր. | 142 պ. Սարգսեան Ե. 5 ր. |
| 124 պ. Մերաբեան Գ. 5 ր. | 143 պ. Սարգսեան Ղ. 3 ր. |
| 135 պ. Կարապետեան Գ. 5 ր. | 144 պ. Չաքարեան Չ. 3 ր. |
| 136 պ. Արամեանց Ս. 5 ր. | 145 պ. Շաղինեան Գ. 3 ր. |
| 137 պ. Յակոբեան Ա. 5 ր. | 146 պ. Կոլկա 3 ր. |
| 149 պ. Եղիսան Հ. 5 ր. | |

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ի Յ Ա Ն Կ Ը

Կովմսուհի Վարանցով-Դաշկովից 200 ռ.

Կոմս Վարանցով Դաշկովից 50 ռ.

տ. Մարգարիտ Աբեանից 50 ռ.

Միրզոյեանի նաւթ-արդիւնաբ.

ընկ. 100 ռ.

Մայրապ. Աբամելիքեանից 25 ռ.

X-ից 50 ռ.

տ. Աննա Գէորգեանից 25 ռ.

պ. Յակոբ Դուկասեանից 25 ռ.

բժ. Շիւեանից իր որդու ծնըն

դեան տօնի առթիւ 5 ռ.

տ. Կ. Լիսիցեանից յօգուտ բա

բարի 3 ռ.

տ. Մեհրաբեանից Կոճորուժ մ

քանի տիկիներէրից հա

ւարած 13 ռ. 13 կ.

Հնգամենը 546 ռ. 13 կ

Ն Ո Ի Է Ր Մ Ե Ր Ի Ր Ե Ր Ո Վ

Տ. Երևանցեանցից չայի սերվիզ

Պ. Քոչարեանից 1 ստանոկ

» » 1 գօբէլ

Տ. Յակոբեանից 1 ինքնատեղ

» » մահուդ սեզանի

Տ. Անանեանից 1 կարի մեքենայ

Հայր Շիրոյեանից 1 ստանոկ և

» » 1 կնիք

Պ. Զիլինգարեանից 1 պատի ժամ.

Տ. Արեշեանից 1 գրատախտակ

» » 3 նստարան

Պ. Ալիխանեանից 1 ապտէնկա

Տ. Դարեա Յովհաննիսեանից

» » 1 հայելի

Տ. Օհանջանեանից 1 ինքնատեղ

Տ. Ս. Շահնազարեանից 1 ինքնատեղ

Պ. Գևորգ Աբովեանից 2 պատ

կեր Կայսրի և Կայսրուհու:

0022939

2013 5541



NL0022939

